ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

ՀՀ Գեղարքունիքի մարզի «Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ կառուցման շինարարական աշխատանքներ, NCB No: CR4/NCB/B-W/007-19

Հարգելի Հայտատուներ,

Ի պատասխան, 2020թ-ի Հունվարի 17 ARMEPS համակարգի միջոցով ստացված հարցումների, կից Ձեզ ենք ներկայացնում հետևյալ պարզաբանումները վերոնշյալ մրցույթի վերաբերյալ («Հրահանգներ Մրցույթի Մասնակիցներին» (Բաժին I) 7.1 հոդված).

1. *Հարց.* պարտադի՞ր է արդյոք ոչ ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից էլեկտրոնային ստորագրությունը:
   Պատասխան. Ոչ պարտադիր չէ, հայտը կազմող փաստաթղթերը կարող են լինել կնքված, ստորագրված և բնօրինակից սկանավորված:

2. *Հարց.* Ձև EXP-4.1 ընդհանուր շինարարական փորձ և EXP-4.2(ա) հատուկ շինարարական և պայմանագրի կառավարման փորձ ձևաթղթերում պայմանագրերի անվանումները միայն մայր լեզվով(ռուսերեն) կարելի՞ է ներկայացնել(նշեմ,որ գումարը ռուբլուց բացի նաև տեղական արժույթով(ՀՀ դրամ)ենք ներկայացնելու)):
   Պատասխան. Համաձայն վերոնշյալ մրցութային փաթեթի՝ «Մրցութային տվյալների աղյուսակ» (Բաժին II) 10.1 կետի. Մրցութային առաջարկը, ինչպես նաև Մրցութային առաջարկին վերաբերող Մրցույթի մասնակցի և Պատվիրատուի միջև փոխանակված ողջ նամակագրությունը և փաստաթղթերը պետք է գրվեն *Հայերեն*: Մրցութային առաջարկի մաս հանդիսացող օժանդակ փաստաթղթերը և տպված գրականությունը կարող են ներկայացվել մեկ այլ լեզվով՝ միևնույն ժամանակ ապահովելով դրանց ճշգրիտ թարգմանությունը հայերեն լեզվով:
   Ընդ որում, յուրաքանչյուր տարվա շինարարության գծով շրջանառության կամ ֆինանսական տվյալների համար օգտագործվում է համապատասխան օրացույցային տարվա (որի գումարը պետք է փոխարկվի) վերջին օրվա դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված փոխարժեքը, իսկ առանձին պայմանագրի արժեքի համար՝ պայմանագրի կնքման ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված փոխանակման փոխարժեքը («Գնահատման և որակավորման չափանիշներ» Բաժին III-ի):

3. *Հարց.* Ձև Fin-3.1 և Fin-3.2 ձևաթղթերում տեղական արժույթից (ՀՀ դրամ) բացի ռուբլո՞վ էլ պիտի արտացոլվի գումարը:
   Պատասխան. Համաձայն վերոնշյալ մրցութային փաթեթի՝ «Գնահատման և որակավորման չափանիշներ» Բաժին III-ի. Յուրաքանչյուր տարվա շինարարության գծով շրջանառության կամ ֆինանսական տվյալների համար օգտագործվում է համապատասխան օրացույցային տարվա (որի գումարը պետք է փոխարկվի) վերջին օրվա դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված

փոխարժեքը, իսկ առանձին պայմանագրի արժեքի համար՝ պայմանագրի կնքման ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված փոխանակման փոխարժեքը:

4. *Հարց.* Համաձայն ձև Fin-3.1-ի մաս 2-ի՝ ֆինանսական փաստաթղթեր հատվածի, **5 տարիների** պահանջված (**ֆինանսական կարգավիճակի մասին հաշվետվություն/հաշվապահական հաշվեկշիռ, շահութահարկի մասին հաշվետվություն և այլն)**,այսինքն՝ և ֆինհաշվետվություն և շահութահարկի հաշվետվություն պիտի ներկայացվի,թե՞ կամ մեկը,կամ՝ մյուսը:
Պատասխան. Անհրաժեշտ է ներկայացնել բոլոր հաշվետվությունները:

5. *Հարց.* Եվ հետագայում, պայմանագրի շնորհման դեպքում, եթե տնօրենը պայմանագրի և այլ փաստաթղթեր ստորագրելու դեպքում լիազորելու է մեկ այլ անձի,այդ դեպքում պարզաբանեք խնդրում եմ առաջին փուլում՝հայտերի ներկայացման ժամանակ անհրաժեշտ է լիազորագիր,թե՞ ոչ:
Պատասխան. Համաձայն վերոնշյալ մրցութային փաթեթի՝ «Մրցութային տվյալների աղյուսակ» (Բաժին II), 20.2 կետի. Մրցույթի մասնակցի անունից ստորագրելու իրավունքը պետք է պարունակի.

1.Լիազորագիր հաստատված հայտատուի կողմից կնիքով:

2.Եթե Հայտը ներկայացվել է գոյություն ունեցող կամ նախատեսվող ՀԳ-ի կողմից, բոլոր կողմերը պետք է՝ (i) ստորագրեն պարտավորություն, որ համատեղ և յուրաքանչյուրն իր հերթին կրում են պատասխանատվություն, (ii) նշանակեն Ներկայացուցիչ, որն իրավասու կլինի գործել ՀԳ-ի և նրա բոլոր անդամների անունից մրցութային գործընթացում, իսկ Պայմանագիրը շնորհելու դեպքում՝ նաև պայմանագրի իրականացման ընթացքում:
Հայտի հետ պետք է ներկայացվի գլխավոր Հայտատուին լիազորող նամակի սկանավորված պատճենը:

6. *Հարց.* Ավելացնեմ նաև, որ Armeps.am կայքից բեռնել եմ գործիքը, սակայն MB-ի տարողությունը փոքր է պահանջված բոլոր փաստաթղթերի համար:
Պատասխան. Համակարգով սահմանված տարողություն է:

Հարգաքով,

Քրիստինե Ղամբարյան
Գնումների մասնագետ
ՀՀ ԱՆ «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ
ՀՀ, ք. Երևան 0051, Կոմիտասի 49/4, 5-րդ հարկ
Հեռ.՝ (+374 10) 29 75 36, (+374 10) 29 75 37
Էլ. հասցե՝ procurement@healthpiu.am, kristine.ghambaryan@healthpiu.am
Վեբկայք՝ www.healthpiu.am